

ՕԳՈՍՏՈՍ 7-Ի ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ


Posted on August 7, 2018 by Keghart




Category: [Opinions](#)




ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

7 Օգոստոս 1982-ին, Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի (ԱՍԱԼԱ)  երկու մահապարտ մարտիկներ՝ Չոհրապ Սարգիսեան Եւ Լեւոն Էքմէքճեան, զինեալ յարձակում գործեցին Անգարայի միջազգային «[Էսեմպոդա](#)» օդանաւակայանին դէմ: Պատանդառումի զուգահեռ, ռազմավարական նշանակութեան կառոյցի անվտանգութիւնը ստանձնած թրքական բանակային զօրամիաւորի եւ ապահովական ուժերու հետ անոնց մարտըշարունակուեցաւ երեք ժամ, եւ աւարտեցաւ միայն, երբ սպառեցաւ մահապարտներու զինամթերքը եւ նահատակուեցաւ Չոհրապ Սարգիսեան, իսկ Լեւոն Էքմէքճեան ծանր վիրաւոր վիճակով գերեվարուեցաւ թրքական անվտանգութեան ուժերուն կողմէ, եւ յետ ձեւական դատավարութեան կախաղան բարձրացաւ 29 Յունուար 1983-ին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

7 Օգոստոս 1982-ին, Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի (ԱՍԱԼԱ)  երկու մահապարտ մարտիկներ՝ Չոհրապ Սարգիսեան Եւ Լեւոն Էքմէքճեան, զինեալ յարձակում գործեցին Անգարայի միջազգային «[Էսեմպոդա](#)» օդանաւակայանին դէմ: Պատանդառումի զուգահեռ, ռազմավարական նշանակութեան կառոյցի անվտանգութիւնը ստանձնած թրքական բանակային զօրամիաւորի եւ ապահովական ուժերու հետ անոնց մարտըշարունակուեցաւ երեք ժամ, եւ աւարտեցաւ միայն, երբ սպառեցաւ մահապարտներու զինամթերքը եւ նահատակուեցաւ Չոհրապ Սարգիսեան, իսկ Լեւոն Էքմէքճեան ծանր վիրաւոր վիճակով գերեվարուեցաւ թրքական անվտանգութեան ուժերուն կողմէ, եւ յետ ձեւական դատավարութեան կախաղան բարձրացաւ 29 Յունուար 1983-ին:

Թրքական պետական ծրագրաւորումով, կազմակերպումով եւ իրագործումով բնորոշուող՝ Հայ ժողովուրդի ցեղասպանութիւնէն, հայրենագրկումէն եւ սփիւռքացումէն 67 տարիներ ետք, հայկական նորագոյն պատմութեան մէջ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ, ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդի յետնորդները, օտար ափերու վրայ հասակ առած անոր շառաւիղները, ոչ ինդրագիրով կամ բողոքագիրով, այլ ՉԷՆ Ի ՁԵՌԻՆ կը վերադառնային թրքական պետութեան սրտին վրայ եւ կը թիրախաւորէին անոր մայրաքաղաքի ամենառազմավարական նշանակութեան կառոյցներէն մէկը:  Անոնք՝ կանխաւ գիտակցելով մարտի անհաւասարութիւնը, փախուստի կամ թաքնուելու անհնարինութիւնը, հետեւաբար նահատակութեան անխուսափելիութիւնը, ճակատ առ ճակատ, շեշտակի եւ անվախ նայելով ոսոխի աչքերուն մէջ, մինչեւ արեան իրենց վերջին կաթիլը կը մարտնչէին թշնամի զինեալ ուժերուն դէմ՝ առ թրքական պետութեան, միջազգային հանրային կարծիքին եւ ուժային բոլոր կեդրոններուն յղելով իրենց աղաղակող պատգամը, որ հայ ժողովուրդը որոշած է՝

չհամակերպուիլ իրեն վիճակուած ճակատագիրին հետ, չհաշտուիլ հայրենիքի կորուստին հետ, չմոռնալ ցեղասպանուած նահատակները եւ եթէ հարկ է, անհաշտ պայքարիլ նոյնիսկ զէնքով, այսինքն այն լեզուով որ աշխարհաքաղաքական տարատեսակ կեդրոնները ամենալաւը, եւ յաճախ միակը ` կը հասկնան, եւ այդ պայքարը տեղափոխել Թուրքիոյ տարածքին վրայ, մինչեւ որ վերահաստատուի արդարութիւնը եւ վերականգնուին մարդկային ու ազգային իր անկորչելի իրաւունքները:

Այդ պատգամը հասցեագրուած էր նաեւ ներհայկական լսարանին, որ այլեւս անցած էին աղերսագիրներու եւ քարոզչական բնոյթի արարքներու ժամանակները եւ զինեալ պայքարը պէտք էր փոխադրել թրքական պետութեան սրտին վրայ, այնտեղ ուր թշնամին ասառաւելագոյնս պիտի զգար հայկական հարուածող բազուկի ուժը եւ պիտի ապրէր սարսափի ահագնութիւնը:

Ա՛յս էր եւ կը շարունակէ ըլլալ Օգոստոս 7-ի պատմաքաղաքական նշանակութիւնը:

Ա՛յս ուղերձն է՝ որ ազատագրական պայքարի բոլոր նահատակներու Յիշատակի ամենամեայ ոգեկոչումով, կը պահենք ու պիտի պահպանենք՝ այժմեական, կենդանի եւ նպատակային:

Փա՛ռք նահատակներուն եւ պայքարի բոլոր մարտիկներուն:

7 Օգոստոս 2018

Հայկական Ժողովրդային Շարժում

Լիբանանի Կառոյց

